



ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԿԱՏԱՆԻ ՎԱՍՏԻ
EUROPEAN UNION FOR ARMENIA



Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia



ՆԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ 2021



ՆԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հավելված 1
Առողջապահության նախարարի
2021 թ. սեպտեմբերի 24-ի թիվ 3526-Լ հրամանի

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ
և Առողջապահության համաշխարհային կազմակերպության օժանդակությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Առողջապահության
Նախարարությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և
Առողջապահության համաշխարհային կազմակերպության տեսակետները



ԵՐԵՎԱՆ 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԴԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«24» սեպտեմբեր 2021թ. No 3526 - Լ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ (COVID-19)
ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՐԴԵՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- Հաստատել հիվանդանոցային պայմաններում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պացիենտների վարման կլինիկական ուղեցույցը՝ համաձայն Հավելվածի:
- Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումն Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Գևորգ Սիմոնյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԳԼՈՒՄ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

■ Սույն ուղեցույցը նախատեսված է այն բուժաշխատողների համար, ովքեր պատվաստումային ծառայություններ են մատուցում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (ֆիքսված և արտագնա, շարժական), շահագրգիռ կողմերի, ովքեր ապահովում են պատվաստումային գործընթացը: Փաստաթուղթը տեղեկատվական ուղեցույց է հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի (այսուհետ՝ ՀԱԴ) վարման: Այն կարող է նաև որպես ուսումնական ձեռնարկ հանդիսանալ դասավանդողների և հետապոտողների համար:

■ Ուղեցույցը նախապատրաստվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից Պատվաստանյութերի անվտանգության գլոբալ խորհրդատվական հանձնաժողովի (GACVS) ղեկավարությամբ, մշակվել է ԱՀԿ-ի տարածաշրջանային բյուրոյի և Արևմտյան Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանային գրասենյակի կողմից:

■ Ուղեցույցը մշակվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի ««Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունակակառուցման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՍԿ N 3.3.1.003-20 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի N 20-Ն հրամանն ուժը կորցրած ձանաչելու մասին» թիվ 21-Ն հրամանի հիման վրա:

■ Իմունակակառուցումը հանրային առողջության ամենաարդյունավետ միջամտություններից մեկն է, որը պաշտպանում է առանձին անհատներին և ընդհանուր բնակչությանը կառավարելի վարակներից:

■ Պատվաստումները փրկում են միլիոնավոր կյանքեր: Ժամանակակից պատվաստանյութերն անվտանգ և արդյունավետ են: Այնուամենայնիվ, ինչպես մյուս դեղերը, պատվաստանյութերը նույնպես կարող են հանգեցնել անբարեհաջող ռեակցիաների:

ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

■ Հետպատվաստումային անբարեհաջող դեպքը (այսուհետ՝ ՀԱԴ) ցանկացած բժշկական անբարեհաջող երևույթ է կամ իրադարձություն, որն ի հայտ է եկել պատվաստումից հետո, սակայն պարտադիր չէ, որ ունենա պատճառահետևանքային կապ պատվաստման հետ:

■ ՀԱԴ-ը կարող է լինել ցանկացած անբարեհաջող կամ անսպասելի իրադարձություն, լաբորատոր ցուցանիշների շեղում, ախտանիշ կամ հիվանդություն:

■ ՀԱԴ-երն ըստ առաջացման պատճառի դասակարգվում են՝

□ **Ռեակցիա՝ կապված պատվաստանյութի հետ**, այն յուրահատուկ ռեակցիա է պատվաստանյութի նկատմամբ, առաջանում է պատվաստանյութերի ոչ պատշաճ արտադրության, առաքման և ներմուծման դեպքում: Այն առաջանում է պատվաստանյութին բնորոշ մեկ կամ մի քանի հատկանիշների հետևանքով: Հաճախ, պատվաստանյութի նկատմամբ ռեակցիայի հատուկ մեխանիզմն անհայտ է: Պատվաստանյութի հետ կապված ռեակցիաների առաջացման հավանականությունն ավելի բարձր է ռիսկի խմբում գտնվող անձանց մոտ, իսկ պատվաստվածների մեծ մասի մոտ այդ ռեակցիաները չեն առաջանում:

□ **Ռեակցիա՝ կապված պատվաստանյութի որակի թերության հետ**: Պատվաստանյութի որակական թերությունը կարող է լինել արտադրության ընթացքում: Նման թերությունը կարող է ազդել օրգանիկ-մի անհատական պատասխանի վրա և մեծացնել պատվաստանյութի նկատմամբ անբարեհաջող ռեակցիաների ռիսկը:

□ **Ռեակցիա՝ կապված պատվաստումային գործընթացի սխալի հետ**, կարող է առաջանալ պատվաստանյութի սխալ վարման, պահպանման, կիրառման հետևանքով: Ռեակցիաները կապված իմունակամասնատվածության գործընթացի սխալների հետ, կանխվող են: Սխալների ժամանակին հայտնաբերումը և վերացումը շատ կարևոր են:

Ռեակցիաները կապված իմունակամասնատվածության գործընթացի սխալների հետ, երբեմն կարող են հանգեցնել խմբային դեպքերի առաջացմանը: Դրանք սովորաբար կապված են պատվաստանյութերի մեկ կամ բազմադեղաչափանոց սրվակների կիրառման հետ, որոնք կամ աղտոտված են կամ ոչ պատշաճ պահպանված: Օրինակ՝ պատվաստանյութերի տեղափոխման ընթացքում պատվաստանյութի սառեցումը կարող է մեծացնել տեղային ռեակցիաների քանակը:

Պատվաստման ընթացքում ոչ ստերիլ ներարկումը, պատվաստանյութի ոչ պատշաճ վերականգնումը, ներարկիչների աղտոտումը կարող է հանգեցնել տեղային ռեակցիայի, արքցեսի կամ ծանր համակարգային ռեակցիայի՝ սեպսիսի, տոքսիկ շոկի համախտանիշի վարգացման: Ինքնարգելափակվող ներարկիչների օգտագործման արդյունքում, նման ռեակցիաների հաճախականությունը պզալիորեն նվազում է: Սակայն, վարակը կարող է առաջանալ վանզվածային պատվաստումների կամ բնական աղետների դեպքում, հատկապես օգտագործվող օժանդակ միջոցների մատակարարումների պակասի կամ լրգիստիկայի հետ կապված: Իմունականխարգելման ծրագրերի դեկավարների բարձր պատրաստվածության և աշխատանքային գործընթացի պատշաճ պլանավորման շնորհիվ հնարավոր է խուսափել դրանից: Հակացուցումների անտեսումը կարող է հանգեցնել պատվաստանյութերի նկատմամբ լուրջ ռեակցիաների:

□ Ռեակցիա կապված պատվաստման վախի հետ: Այն պայմանավորված է վախով պատվաստումային գործընթացի հանդեպ: Գիտակցության կորուստը (վազովազալ ռեակցիա սինկոպե կամ ուշագնացություն) բավականին տարածված է, հատկապես երեխաների և դեռահասների շրջանում, ներարկման վախի հետ կապված: Ուշագնացությունը բուժում չի պահանջում, բացի հիվանդին պառկած դիրք տալուց: Որոշ անձանց մոտ ուշագնացությունը կարող է ուղեկցվել հիպոքսիկ ցնցումներով: Դրանք կարճաժամկետ գեներալիզացված տոնիկ-կլոնիկ ցնցումներ են: Ցնցումներն արագ ավարտվում են, սակայն եթե դրանք շարունակվում են, կարող է պահանջվել լրացուցիչ ուսումնասիրություն: Դեռահասներին պատվաստելիս պետք է հաշվի առնել, որ ուշագնացության հավանականությունն ավելի է մեծանում:

Պատվաստման վախի պատճառով հիպերվիճակիցիան բերում է հատուկ ախտանիշների, ինչպիսիք են թուլությունը, գլխապտույտը, բերանի և ձեռքերի շրջանում դողը:

□ Ժամանակային առումով համընկնում պատվաստման հետ. ՀԱԴ, որն առաջացել է այլ պատճառներից (ոչ պատվաստանյութով, ոչ պատվաստման սխալով կամ ոչ պատվաստման վախով), հիվանդություն կամ ախտանիշ, որը պարզապես ժամանակային առումով համընկել է պատվաստման հետ: Պատահական ժամանակային համընկնումը (այսինքն՝ պատվաստումներից հետո տեղի ունեցող իրադարձությունը) հաճախ սխալմամբ համարվում է պատվաստման հետևանք: Նման պուգադիպություններն անխուսափելի են հաշվի առնելով պատվաստանյութերի մեծ քանակով դեղաչափերի կիրառումը, հատկապես, վանզվածային պատվաստումներ իրականացնելու ժամանակ:

Պատվաստումների ավելի մեծ բաժինը կատարվում են կյանքի առաջին տարում, իսկ տարածված վարակները և այլ հիվանդություններ, ներառյալ որոշ ֆունային բնածին կամ նյարդաբանական վիճակները, համընկնում են ստացած պատվաստումների հետ: Հետևաբար, կարող են տեղի ունենալ տարբեր իրադարձություններ, ներառյալ մահերը, որոնք պատահական համընկնման պատճառով սխալմամբ կարող են վերագրվել պատվաստումներին: Մանկական հանկարծամահության համախտանիշի հաճախությունն համընկնում է վաղ մանկական շրջանում կատարվող պատվաստումների հետ: Այնուամենայնիվ, պատշաճ կերպով մշակված մի շարք ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ՀԱԴ-երի դեպքերի և պատվաստումների համընկնումը ժամանակային պատահականություն է, քան պատճառահետևանքային կապ:

■ Պատվաստանյութի նկատմամբ ռեակցիաներն առանձնացվում են

- ըստ պատճառի,
- ըստ ծանրության,
- ըստ հաճախականության:

■ Պատվաստանյութերի ռեակցիաներ՝ ըստ պատճառի.

- ռեակցիա՝ կապված պատվաստանյութի հետ,
- ռեակցիա՝ կապված պատվաստանյութի որակի թերության հետ,
- ռեակցիա՝ կապված պատվաստման սխալի հետ,
- ռեակցիա՝ կապված պատվաստման վախի հետ:

■ Պատվաստանյութերի ռեակցիաներ՝ ըստ հաճախության.

- տարածված, հաճախ հանդիպող թեթև ռեակցիաներ,
- հազվադեպ հանդիպող լուրջ ռեակցիաներ:

■ Տարածված, հաճախ հանդիպող ռեակցիաներ՝

Իմունային պատասխանով պայմանավորված, կարող են առաջանալ տեղային ռեակցիաներ, և համակարգային խտանիշներ: Ռեակցիաները կարող են առաջանալ պատվաստանյութի որոշ բաղադրիչներից (օրինակ՝ օժանդակ միջոցներ, կայունացուցիչներ կամ կոնսերվանտներ): Արդյունավետ և անվտանգ պատվաստանյութերը նպաստում են լավագույն իմունիտետի ձևավորմանը և նվազագույնի են հասցնում ռեակցիաների քանակը:

□ Համակարգային ռեակցիաների հաճախականությունը նույնպես կախված է պատվաստանյութի տեսակից: Ջերմության բարձրացումը (>10%) հանդիսանում է սովորական տարածված ռեակցիա, որը գրանցվել է հակածինների մեծ մասի կիրառումից հետո: Այլ տարածված համակարգային ռեակցիաները (օրինակ դյուրագրգռություն, ընդհանուր թուլություն, ախորժակի կորուստ) կարող են առաջանալ նաև մեծ քանակությամբ հակածինների օգտագործումից հետո, օրինակ բջջային կապույտ հապի բաղադրիչ պարունակող ԱԿԴՓ համակցված պատվաստանյութերի օգտագործումից հետո այդպիսի ռեակցիաներն ավելի շատ են, քան ոչ բջջային կապույտ հապի բաղադրիչ պարունակող ԱԿԴՓ համակցված պատվաստանյութերի օգտագործումից հետո: Կենդանի ատենուացված պատվաստանյութերն, օրինակ կարմրուկի բաղադրիչ պարունակող պատվաստանյութերը կարող են առաջացնել ջերմության բարձրացում, ցան, կոնյուկտիվիտ, սակայն այդ ռեակցիաներն աննշան են կարմրուկի հիվանդության համեմատ:

■ **Իրադարձությունները, որոնք չեն հանդիսանում «լուրջ» և չեն ենթադրում պացիենտի առողջության համար հավանական ռիսկ, նույնպես պետք է հետապնդվեն, այդ թվում՝**

□ «Ոչ լուրջ ՀԱԴ-երը» պետք է մանրակրկիտ դիտարկվեն, քանի որ դրանք կարող են պատվաստանյութերի կամ պատվաստման հետ կապված ավելի լուրջ խնդրի ապոանշան լինել, կամ ապդել իմունականխարգելման ընդհանուր գործընթացի վրա,

□ «Ծանր» ՀԱԴ տերմինը օգտագործվում է վիճակի ինտենսիվությունը նկարագրելու համար (օրինակ՝ թեթև, միջին և ծանր):

■ Հավաղեպ հանդիպող լուրջ ՀԱԴ-երը (ներկայացված են Զև 1-ում)՝ կարող են կյանքին սպառնացող վիճակի, մահվան պատճառ դառնալ, պահանջել հիվանդի հոսպիտալացում, հատկապես, եթե ժամանակին չեն արձանագրվում և վարվում, օրինակ, անաֆիլաքսիան: Պատվաստանյութի նկատմամբ անաֆիլաքսիան խիստ հավաղեպ է հանդիպում: Անաֆիլաքսիան միշտ համարվում է կյանքի համար վտանգավոր երևույթ: Չնայած անաֆիլաքսիայի մահացու վտանգին, այն բուժելի է: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում բոլոր ԲԿ-ներին միշտ պատրաստ լինել անաֆիլաքսիայի դեպքում անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերելու համար: Իմունականխարգելման գործընթաց իրականացնող բոլոր ԲԿ-ների բուժաշխատողները պետք է վերապատրաստվեն՝ պատվաստումից հետո անաֆիլաքսիայի առաջացման դեպքում առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար, համաձայն Զև 5,6-ի:

■ Պատվաստանյութի նկատմամբ հապվադեպ և լուրջ ռեակցիաներ են ցնցումներ, թրոմբոցիտոպենիա, հիպոտոնիկ-հիպոռեակտիվ դրվագները, հարատև ճիչը չեն հանգեցնում երկարատև առողջական խնդիրների:

ԳԼՈՒԽ 3

ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՈՒՄ

■ **ՀԱԴ-երը հայտնաբերվում են՝**

- ակտիվ ձևով՝ բուժաշխատողի (բժիշկ կամ բուժքույր) կողմից,
- պասիվ ձևով՝ հեռախոսապանգով կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կապմակերպություն (այսուհետ՝ ԲԿ) դիմելիս ծնողի կամ այլ աղբյուրի տեղեկացմամբ:

■ ՀԱԴ-եր արձանագրելիս անձին ցուցաբերվում է բժշկական օգնություն, անհրաժեշտության դեպքում՝ ապահովվում է հոսպիտալացումը:

■ ՀԱԴ-երը գրանցվում են համապատասխան բժշկական փաստաթղթերում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում», «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում», «Նորածնի վարգացման պատմությունում», ինչպես նաև շտապ օգնության բժշկական քարտում, հիվանդանոցում՝ հիվանդի բժշկական քարտում:

■ Լուրջ ՀԱԴ-երը գրանցվում են «Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցամատյանում», համաձայն՝ Ձև 7-ի, «Կանխարգելիչ պատվաստումների քարտում», «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում», «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման մատյանում, իսկ թեթև ՀԱԴ-երը՝ «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում», «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում», «Նորածնի վարգացման պատմությունում» և «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում»:

■ **Հետպատվաստումային շրջանում կատարվում են՝**

- Դիտարկումներ՝** բուժաշխատողի կողմից բոլոր պատվաստանյութերի ներմուծումից հետո 0-48 ժամվա ընթացքում, կարմրուկ, կարմրախտի բաղադրիչ պարունակող պատվաստանյութերի դեպքում

Նաև 6-12-րդ օրերի ընթացքում, ռոտավիրուսային պատվաստանյութի դեպքում՝ նաև 4-7-րդ օրերի ընթացքում, իսկ տուլարեմիայի դեպքում՝ 4-15-րդ օրերին, կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումից հետո նաև 4-20-րդ օրերի ընթացքում,

□ Գրանցումներ՝ պատվաստումներից հետո դիտարկման արդյունքները գրանցվում են ամբուլատոր քարտում: ՀԱԴ-ի առկայությունը (թեթև և լուրջ) գրանցվում է ՀԱԴ-ի առաջացման օրը՝ ամբուլատոր քարտում և պատվաստումների պլանավորման գրանցամատյանի նկատառումներ սյունակում: ՀԱԴ-ի բացակայությունը գրանցվում է բոլոր պատվաստումներից 48 ժամ հետո (3-րդ օրը՝ հաշված պատվաստման օրից) ամբուլատոր քարտում: ԿԿԽ պատվաստման դեպքում գրանցումը կատարվում է նաև 12-րդ օրը (հաշված պատվաստման օրից), ռոտավիրուսային պատվաստման դեպքում՝ նաև 7-րդ օրը (հաշված պատվաստման օրից), տուլարեմիայի դեպքում՝ նաև 15-րդ օրը (հաշված պատվաստման օրից), կորոնավիրուսային հիվանդության դեմ նաև պատվաստումից հետո՝ 20-րդ օրը:

ԳԼՈՒԽ 4

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

■ Իմունականխարգելման գործընթացի անվտանգության արդյունավետ համակարգը պահանջում է իմունականխարգելման ծրագրի բոլոր մակարդակներում առողջապահության ոլորտի մասնագետների ներգրավվածություն:

■ **Իմունականխարգելման գործընթացում ընդգրկված բուժաշխատողների գործառույթներն են՝**

□ ՀԱԴ-երի հայտնաբերում

ԲԿ-ների բուժանձնակազմը պետք է խրախուսի պատվաստում ստացողի, ծնողի կամ խնամակալի կողմից ՀԱԴ-երի հաղորդումը: Դա բուժաշխատողի պարտականությունն է՝ բացահայտել և հաղորդել ՀԱԴ-երի դեպքերը: Եթե որոշակի իրավիճակի դեպքում անհրաժեշտ է բուժօգնություն, անձը, ում մոտ դիտվել է ՀԱԴ, պետք է տեղափոխվի մոտակա ԲԿ:

□ ՀԱԴ-երի գրանցում

ա. Իմունականխարգելման գործընթացի անվտանգության դիտարկման համար անհրաժեշտ ձևաթղթերը և գրանցամատյանները պետք է տրամադրվեն ԲԿ-ներին և վարվեն նրանց կողմից,

բ. Բոլոր անհրաժեշտ տվյալները լրացվում են ձևաթղթերի/գրանցամատյանների մեջ:

□ ՀԱԴ-երի հաղորդում

ա. Դեպքի հայտնաբերումը հանդիսանում է ՀԱԴ-երի մշտադիտարկման առաջին կարևոր քայլը,

բ. Առաջնային հաղորդողը կարող է լինել (օր.՝ անձ, ով առաջինն է հայտնել ՀԱԴ-ի ի հայտ գալու մասին) առողջապահական ոլորտի աշխատող, կլինիկայի անձնակազմի պատասխանատու, կամավորական կամ ցանկացած այլ անձ, ով հաղորդում է դեպքի մասին,

գ. Կասկածն ինքնին հանդիսանում է հաղորդման պատճառ, ընդ որում հաղորդողից չի պահանջվում, գնահատական տալ պատճառահետևանքային կապի վերաբերյալ: Պատվաստանյութերի անվտանգության ապահովման համար կարևոր նշանակություն ունի ի հայտ եկած երևույթի և պատվաստանյութի հետ հավանական կապի արագ նույնականացումը և գնահատումը,

դ. ՀԱԴ-ի կասկածի դեպքում անհրաժեշտ է անմիջապես հաղորդում ներկայացնել համապատասխան կազմակերպություն: Սա հատկապես վերաբերում է լուրջ դեպքերին (տես՝ լուրջ դեպքերի սահմանումը),

ե. Հաջորդ բարձր վարչարարական/գործառնական մակարդակին պետք է անմիջապես տեղեկացվեն բոլոր լուրջ (ծայրահեղ վնասակար) և/կամ անսպասելի կողմնակի երևույթների մասին (ներառյալ մահ): Մնացած բոլոր դեպքերը պետք է հաղորդել ընթացիկ կարգով համաձայն բարձր վարչարարական/գործառնական մակարդակով հաստատված ձևաչափի:

□ ՀԱԴ-երի ուսումնասիրություն

ա. Եթե հնարավորություն կա, ուսումնասիրությունը պետք է իրականացնել այդ մակարդակում: Հաղորդված ՀԱԴ-երի վերաբերյալ բոլոր ուսումնասիրություններն անհրաժեշտ է իրականացնել որքան հնարավոր է շուտ,

բ. Ուսումնասիրությունները պետք է աջակցվեն պատշաճ կերպով լաբորատոր փորձաքննությամբ: Հանրությունը պետք է տեղեկացված լինի հետապոտության ընթացքին և դրա ավարտից հետո արդյունքները և երկարացությունները պետք է տրամադրվեն խմբի բոլոր անդամներին և հանրությանը:

□ ՀԱԴ-երի տվյալների վերլուծություն

Անհրաժեշտ է այս մակարդակին համապատասխան տվյալների վերլուծություն: Հաղորդումները պետք է հիմնված լինեն վերլուծության և ուսումնասիրության արդյունքների վրա:

□ Կարգավորող միջոցառումներ

ա. Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պետք է անմիջապես ձեռնարկվեն կարգավորող միջոցառումներ՝ հատկապես իմունականխարգելման գործընթացի սխալի հետ կապված առաջացած երևույթների դեպքում,

բ. Հանրության կրթում/հաղորդակցություն,

գ. Հնարավորության դեպքում, հանրությունը պետք է տեղեկացվի, թե ինչ է տեղի ունեցել: Հանրությունը պետք է հստակ պատկերացում ունենա ՀԱԴ-երի մասին,

դ. Պատճառահետևանքային կապի գնահատում, ենթազգային մակարդակում, որոշել լուրջ ՀԱԴ-երի առաջացման պատճառները,

ե. Այն փաստը, որ պատվաստանյութի ներմուծման և պատվաստումից հետո առաջացած կողմնակի երևույթների միջև կա ժամանակային առումով կապ, դեռևս չի ապացուցում, որ պատվաստանյութն է նպաստել կամ առաջացրել իրադարձությունը: Ապացուցողական բազան պատվաստանյութի և իրադարձության առաջացման միջև (որպես պոտենցյալ պատճառ), ձևավորվում է համաճարակաբանական հետազոտության հիման վրա իրականացված խիստ գիտական մեթոդներով, նվազեցնելով համակարգված սխալները և միջամտող գործոնները (փոխկապակցված),

զ. Պատճառահետևանքային կապի գնահատման ժամանակ, նույնիսկ, եթե կան պատճառահետևանքային կապի ապացույցներ մի շարք պատվաստանյութերի և ՀԱԴ-ի միջև (օր. կարմրուկի պատվաստանյութի և տրոմբոցիտոպենիայի), կարևոր է հետապոտել իրադարձության և նրա ազդեցության հավանականության բոլոր հնարավոր տարբերակները, մինչ իրադարձությունը կապելը պատվաստանյութի, նրա որակական թերությունների, իմունականխարգելման գործընթացի սխալների, պատվաստման վախի հետ, կամ նրան որպես պատահական համընկնում դասակարգելը,

է. Հաշվետվությունները կազմվում են տվյալների վերլուծության և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: ՀԱԴ-երի վերաբերյալ տեղեկությունը պարբերաբար տրամադրվում է հանձնաժողովներ, դեղերի փորձագիտական կենտրոն, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՀՎԿԱԿ), ինչպես նաև տրամադրվում են ԱՀԿ դեղերի անվտանգության մշտադիտարկման միջազգային ծրագրին:

□ Հետադարձ կապ

ա. Հետադարձ կապը ԲԿ-ների և Առողջապահության նախարարության համապատասխան ստորաբաժանումների միջև ցանկացած մշտադիտարկման համակարգի կարևորագույն տարրն է: Այն խրախուսում և ապահովում է տվյալների հաղորդումը, ինչը հանդիսանում է ՀԱԴ-երի մշտադիտարկման համակարգի հիմքը,

բ. Հետադարձ կապն օգնում է բուժաշխատողներին բարելավել պատվաստումային գործընթացը

□ Հանրության կրթում/հաղորդակցություն

Անհրաժեշտության դեպքում, իրապեկման ծրագրերի միջոցով պետք է հանրությանը և ԶԼՄ-ներին տեղեկատվություն տրամադրել հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի մասին:

□ Դեպքերի հաղորդում

Ծնող, խնամակալի, մեծահասակի կամ բուժաշխատողի մոտ կասկած հարուցող ցանկացած ՀԱԴ պետք է հաղորդվի: Մասնավորապես, բուժաշխատողները պետք է հաղորդեն հետևյալ դրսևորումների մասին

□ Լուրջ ՀԱԴ-եր՝

ա. Լոր ներդրված պատվաստանյութերի հետ կապված բոլոր դեպքերի մասին,

բ. ՀԱԴ, որը կարող է առաջացած լինել պատվաստման սխալի հետևանքով,

գ. Զբացահայտված պատճառով նշանակալի դեպքեր, որոնք տեղի են ունեցել պատվաստումից հետո 30 օրվա ընթացքում,

դ. Ծնողներին, համայնքին, հանրային մտահոգություն առաջացրած ՀԱԴ-երի դեպքերի մասին,

ե. Այնպիսի ՀԱԴ-երի մասին հայտնելը, ինչպիսիք են բարձր ջերմությունը և թեթև տեղային ռեակցիաները, պարտադիր չէ: Սրանք սպասելի ռեակցիաներ են, որոնք առաջանում են պատվաստումներից, և եթե դրանք բոլորը գրանցվեն, ապա համակարգը կծանրաբեռնվի ոչ արժեքավոր տեղեկությունով: Այնուամենայնիվ, օգտակար է դիտարկել և արձանագրել նման դեպքերի ընդհանուր քանակը՝ դրանք համեմատելով նախկին տվյալների հետ: Սա կարող է օգնել հայտնաբերել արտադրանքի որակի թերությունները և անգամ բնակչության որոշակի շրջանում պատվաստումներից առաջացող գերակշռող արձագանքը:

□ Երբ հաղորդել

ա. Դեպքի մասին պետք է հաղորդել հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ քան հայտնաբերելուց 24 ժամվա ընթացքում, մնացած բոլոր լուրջ

դեպքերը՝ ոչ ուշ քան 7 օրն է, որպեսզի անհրաժեշտության դեպքում անհապաղ որոշում կայացվի՝ համապատասխան գործողություններ իրականացնելու կամ հետաքննություն կատարելու վերաբերյալ,

բ. Միաժամանակ, մեծաքանակ դեպքերի ի հայտ գալու կամ հասարակական լուրջ մտահոգության առկայության դեպքում անհրաժեշտ է շտապ տեղեկացնել գործադիր մարմնին:

□ Ինչպես հաղորդել

ա. Դեպքի մասին տեղեկատվությունները պետք է հայտնել շտապ հաղորդման ձևաթղթով՝ Ձև 8 և էլեկտրոնային ձևով և մուտքագրվեն «Արմեդ» առողջապահության էլեկտրոնային համակարգ, գրանցվեն «Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցամատյանում», որի միջոցով հաղորդվեն համապատասխան մարմնին,

բ. Շատ կարևոր է, որ տեղեկության միևնույն քանակը ներառված լինի հաղորդման մեջ, քանի որ այն հիմք է հանդիսանում հետագա հետաքննություններ և որոշումներ կայացնելու համար՝ Ձև 9,

գ. Որոշեք, թե արդյոք ՀԱԴ-երի հաղորդումը հանդիսանում է առաջնային համաձայն սահմանման, և արդյոք անհրաժեշտ է ուսումնասիրություն և/կամ խորհրդատվություն հանրության/ՋԼՄ-ների համար,

դ. Գնացեք ՀԱԴ-ի դրսևորման վայր, կամ նման պատասխանատվություն դրեք որակավորված այլ մարդկանց կամ խմբի վրա,

ե. Որոշեք, կա արդյոք հանրությանը և/կամ ՋԼՄ-ներին տվյալ խնդրի շուրջ հաղորդում տալու անհրաժեշտություն

□ Տվյալների ուսումնասիրություն և հավաքում

ա. Հարցրեք պացիենտի, երևույթի և պատվաստանյութի մասին,

բ. Հարցրեք իմունական խարգելման ծառայության մասին և դիտարկեք այն տեղում (ընդգծեք, որ նպատակը ոչ թե մեղավորներ գտնելն է, այլ համակարգի սխալը բացահայտելն է),

գ. Ձևավորեք աշխատանքային վարկած ՀԱԴ-երի առաջացման վերաբերյալ,

դ. Անհրաժեշտության դեպքում հավաքեք և լաբորատորիա ուղարկեք նմուշներ:

□ Տվյալների վերլուծում

ա. Նայեք տեղում կատարված ուսումնասիրության, կլինիկական և լաբորատոր տվյալները (եթե առկա են),

բ. Նայեք համաձարակաբանական տվյալները (օր.՝ դեպքերի խմբավորում ըստ ժամանակի, տեղի, արտադրողի կամ սերիայի),

գ. Ամփոփեք տվյալները և լրացրեք ուսումնասիրության ձևաթուղթը:

■ Սովորական սպասվող ՀԱԴ-երի վերաբերյալ տեղեկատվությունը վերցվում է ամբուլատոր քարտի պատվաստումների գրանցման էջից կամ պատվաստումների պլանավորման մատյանից, իսկ լուրջ ՀԱԴ-երի՝ ՀԱԴ-երի գրանցամատյանից, ամբուլատոր քարտից և կանխարգելիչ պատվաստումների քարտից:

■ Սովորական սպասվող ՀԱԴ-երի դեպքում գրանցումը կատարում է բուժքույրը:

■ Լուրջ ՀԱԴ-երի դեպքում գրանցումը կատարում է բժիշկը, ամբուլատոր քարտի պատվաստումների գրանցման էջում և ամբուլատոր քարտի գրառումների մասում:

■ Լուրջ ՀԱԴ-երը ենթակա են հաղորդման՝ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին (այսուհետ՝ Լիազոր մարմին):

■ Լուրջ ՀԱԴ-երը ենթակա են հետապոտության, որի արդյունքները գրանցվում են Վետպատվաստումային անբարեհաջող դեպքերի հետապոտման քարտում, համաձայն Ձև 9-ի:

■ ՀԱԴ-երի վերաբերյալ ներկայացվում է ամսական վարչական վիճակագրական հաշվետվություն համաձայն Առողջապահության նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում իմունակակառուցման ոլորտում վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի Նոյեմբերի 9-ի N 19-Ն հրամանն ուժը կորցրած ձանաչելու մասին» N08-Ն հրամանի պահանջների:

■ ԲԿ-ի տնօրենը պարտավոր է լուրջ ՀԱԴ-ի կասկածելի դեպքի արձանագրումից հետո անմիջապես տեղեկացնել Լիազոր մարմնին:

■ ՀԱԴ-ի արձանագրումից հետո 24 ժամվա ընթացքում ուղարկվում է շտապ հաղորդում՝ համաձայն Ձև 8-ի:

■ Բուժաշխատողը՝ մանկաբույժը, ընտանեկան բժիշկը, թերապևտը, նեոնատոլոգը, լուրջ ՀԱԴ կասկածելու դեպքում պարտավոր է անմիջապես տեղեկացնել ԲԿ-ի տնօրենին:

■ ԲԿ-ի տնօրենի հանձնարարությամբ ՀԱԴ-երի պատասխանատուն Լիազոր մարմնի մասնագետի հետ համատեղ մասնակցում է ՀԱԴ-ի հետապոտությանը՝ ՀԱԴ-ի վերջնական դասակարգման համար:

■ ՀԱԴ-երի հետապոտման արդյունքները լրացվում են ՀԱԴ-ի հետապոտման քարտում, որի մեկ օրինակը ներկայացվում է Լիազոր մարմնին:

■ ԲԿ-ի տնօրենն ապահովում է ՀԱԴ-երի վերաբերյալ տրամադրվող տվյալների ամբողջականությունը, հավաստիությունը, ինչպես նաև ժամանակին հաղորդումը:

■ ՀԱԴ-երի հետապոտման տվյալները (հետապոտության ձև, բժշկական հսկողության քարտից կամ հիվանդության պատմությունից քաղվածք, ՀԱԴ-երի փորձագիտական հանձնաժողովների՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում հետապատվաստումային անբարեհաջող դեպքերի գնահատման հանձնաժողովի, Հետապատվաստումային անբարեհաջող դեպքերի գնահատման և հետաքննման հանրապետական հանձնաժողովի ելույթագրություն), ներկայացվում են Լիազոր մարմնին, ՀԱԴ ախտորոշումից 15 օրից ոչ ուշ:

■ ՀԱԴ-երի հետապոտման արդյունքների հիման վրա, ելնելով ՀԱԴ-ի պատճառահետևանքային կապից, օրինակ՝ հաստատված պատճառահետևանքային կապ պատվաստման հետ, կարող է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով որոշում կայացվել որոշակի սերիայի պատվաստանյութի օգտագործման ժամանակավորապես կամ մշտական դադարեցման մասին:

■ Անաֆիլակտիկ շոկի վարզացման դեպքում անմիջապես դադարեցնել պատվաստումը:

■ Անաֆիլակտիկ շոկը կարող է վարզանալ պատվաստանյութի ներարկումից անմիջապես հետո կամ մինչև 1-48 ժամվա ընթացքում, արտահայտվում է անհանգստությամբ, հազով, դժվարացած շնչառությունով՝ բրոնխոսպասմի հետևանքով, եղնջացանով, վարկերակային ճնշման անկումով, հիպերեմիայով, որովայնի շրջանում ցավերով, փսխումով և այլ բնորոշ ախտանշաններով:

■ Առաջին օգնության ցուցաբերման ուշացումը կարող է բերել անձի մահվան:

■ Անաֆիլակտիկ շոկի բուժումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 5-ի N566-Ա հրամանի:

■ Անաֆիլակտիկ շոկի և ուշագնացության տարբերակիչ ախտանշանները ներկայացված են Ձև 4-ում:

ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՆԱԶՈՂ ԴԵՊՔԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ

■ ՎՀԲ-ի պատվաստումից հետո ՀԱԴ-եր շատ հապվադեպ են առաջանում: Ալերգիկ ռեակցիան, շոկը հանդիպում են 1:1000000 դեպքերում:

□ տեղային՝ 15% մեծահասակների և 3% երեխաների մոտ դիտվում է ներարկման տեղում կարմրություն, այտուց,

□ ընդհանուր՝ 1-6% պատվաստվածների մոտ դիտվում է ջերմության թեթև բարձրացում, գլխացավ, անհանգստություն, սրտխառնոց, որոնք անցնում են 1-2 օրվա (48 ժամվա) ընթացքում:

■ ԲՑԺ-ի պատվաստումից հետո՝

□ տեղային թարախային լիմֆադենիտներ՝ առաջանում են պատվաստումից հետո 2-6 ամսվա ընթացքում, բնորոշ է լիմֆատիկ հանգույցի մեծացում 1,5 սմ և ավել, կարող է առաջանալ խուղակ: Սովորաբար առաջանում է պատվաստման կողմի անույթափոսում: Անհրաժեշտության դեպքում թոքաբանի խորհրդատվություն,

□ ընդհանուր՝

ա.դիստեմինացված ԲՑԺ վարակ, վարգանում է պատվաստումից 1-12 ամսվա ընթացքում՝ իմունադեֆիցիտով անձանց մոտ (հաստատվում է Միկոբակտերիա Բովիսի ԲՑԺ-ի շտամի անջատումով), հանդիպման հաճախականությունը՝ 2:1000000,

բ.օստեիտ/օստեոմիելիտ վարգանում է պատվաստումից 1-12 ամսվա ընթացքում:

■ ՕՊՊ պատվաստումից հետո պատվաստվածներից մինչև 1%-ի շրջանում դիտվում է գլխացավ, մկանացավ, (թեթև ՀԱԴ): Շատ հապվադեպ հանդիպում է ծանր ՀԱԴ, պատվաստանյութ ասոցացված պոլիոմիելիտ (ՊԱՊ) և շրջանառվող պատվաստանյութ ասոցացված պոլիոմիելիտ (ՇՊԱՊ): 1 դեպք 2,5 000 000 պատվաստվածից, որը վարգանում է պատվաստումից 4-30 կամ 4-75 օրվա ընթացքում՝ պատվաստվածի կամ կոնտակտավորի մոտ:

■ ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ պատվաստումից հետո՝

□ տեղային՝ ներարկման տեղում կարող է առաջանալ այտուց, հիպերեմիա, ցավ, որը կարող է տևել 1-3 օր,

□ ընդհանուր

ա.թեթև՝ դիտվում է ջերմության բարձրացում պատվաստումից հետո առաջին 24 ժամվա ընթացքում և տևում է 1-2 օր,

բ. լուրջ՝ հապվադեպ ցնցումներ դիտվում են բարձր ջերմության ֆոնի վրա կամ առանց ջերմության, կոլապս (հիպոտոնիկ հիպոռեսպոնսիվ էպիզոդ):

■ Ռոտա պատվաստումից հետո՝ 1-3-րդ օրը և 4-7-րդ օրը երեխաների մոտ կարող է դիտվել գրգռվածություն, այտուցային կորուստ, որոշ դեպքերում ջերմության բարձրացում, թուլություն, դիարեա և փսխում:

■ **Պնևմո պատվաստումից հետո՝**

□ տեղային՝ ներարկման տեղում 50% դեպքերում առաջանում է այտուց, հիպերեմիա, ցավ: Շատ հաճախ կարող է առաջանալ գրգռվածություն և լաց,

□ ընդհանուր

ա.թեթև՝ պատվաստվածների շրջանում դիտվում է ջերմության բարձրացում $>39,4\text{C}$ (20 պատվաստվածից 1-ի մոտ),

բ.լուրջ՝ հապվադեպ ալերգիկ ռեակցիաներ (դերմատիտներ 1:1000 հաճախականությամբ):

■ **ԿԿԽ պատվաստումից հետո՝ 6-12 օրը կարող է վարզանալ.**

□ տեղային ռեակցիա՝ ներարկման տեղում 10% դեպքերում առաջանում է այտուց, հիպերեմիա, ցավ (մինչև 3-րդ օրը),

□ ընդհանուր ռեակցիա՝

ա.թեթև՝ 5-15% պատվաստվածների շրջանում դիտվում է ջերմության բարձրացում, լիմֆադենոպաթիա, ցան՝ 6-12-րդ օրը, որը տևում է 1-3 օր,

բ. լուրջ՝ ֆեբրիլ ցնցումներ 333:1000000 դեպքում, թրոմբոցիտոպենիա 1:1000000 դեպքում, էնցեֆալիտ (ապացուցված չէ), անաֆիլաքսիա՝ 3.5-10:1000000 դեպքում, շճային մենինգիտ (խոլոլի բաղադրիչ), արթրիտ, արթրալգիա:

■ **ԱԿԴՓ համակցված պատվաստումից հետո՝**

□ տեղային

ա.թեթև՝ կապույտ հապի բջջային բաղադրիչի դեպքում 25%-ի մոտ, իսկ ոչ բջջային բաղադրիչի դեպքում՝ 5-10%-ի մոտ պատվաստման տեղում ի հայտ է գալիս կարմրություն, այտուց և ցավ,

բ.լուրջ՝ ստերիլ ինֆիլտրատը հանդիպում է 6-10:1000000 հաճախականությամբ, պայմանավորված փայտացման անատոքսինով,

□ ընդհանուր ռեակցիա՝

ա.թեթև՝ ԱԿԴՓ համակցված պատվաստումից հետո ջերմային ռեակցիա, արձանագրվում է 5-10% դեպքերում,

բ. Լուրջ՝ ցնցումներ, որոնք սովորաբար դիտվում են բարձր ջերմության ֆոնի վրա և հանդիպում է 1:12500 հաճախականությամբ, հիպոտոնիկ հիպոռեապոնսիվ էպիպոդ (կոլլապս)՝ 1:1750 դեպքում, անաֆիլակտիկ շոկը հանդիպում է շատ հազվադեպ:

■ ՄՊՊ պատվաստումից հետո՝

□ տեղային ռեակցիա՝ ցավ, այտուց, կարմրություն, քոր ներարկման տեղում,

□ ընդհանուր ռեակցիա՝ գլխացավ, ջերմության բարձրացում, սրտխառնոց, ընդհանուր թուլություն:

■ ՄԵՆԻՆԳԱԿՈԿԿԱՅԻՆ ՎԱՏՎԱՍՏՈՒՄԻԿ Գ ՀԵՏՈ՝

□ տեղային ռեակցիա՝ ներարկման տեղում ցավ, այտուց, կարմրություն,

□ ընդհանուր ռեակցիա՝ այտուցային բացակայություն, գլխացավ, գլխապտույտ, դիարեա, փսխում, եղջեացան, ընդհանուր թուլություն, ջերմության բարձրացում:

■ ՎԻՐՈՍԱՅԻՆ ՀԵՎԱՏԻՒՄ Ա-Ի ՂԵՄ ՎԱՏՎԱՍՏՈՒՄԻԿ Գ ՀԵՏՈ՝

□ տեղային ռեակցիա՝ հազվադեպ ներարկման տեղում կարող է առաջանալ ցավ (այտուցվածություն, կարմրություն), որոնք անցնում են 1-2 օրում,

□ ընդհանուր ռեակցիա՝ ընդհանուր թուլություն, գլխացավ, կարճատև ջերմության բարձրացում:

■ Տուլարեմիայի ղեմ պատվաստումից հետո՝ տեղային ռեակցիա, վերմաշվային պատվաստման ժամանակ բոլոր պատվաստվողների մոտ առաջանում են տեղային ռեակցիաներ: Քերծվածքների տեղում 4-5 օր հետո, որոշ դեպքերում ավելի ուշ (մինչև 10 օր) վարզանում է կարմրություն և այտուց մինչև 15 մմ տրամագծով, կարող են առաջանալ բշտեր՝ ցորենի հատիկի մեծությամբ: 10-15-րդ օրերին առաջանում է կեղև, տեղային երևույթները մեղմանում են, կեղևի տեղում կարող է մնալ սպի: Երբեմն կարող է դիտվել քերծվածքի հարակից ավշային հանգույցների մեծացում, ցավոտություն:

■ **Գրիպի դեմ պատվաստումից հետո՝**

□ **տեղային ռեակցիա՝** ներարկման տեղում ցավ, կարմրություն, այտուցվածություն, կոշտություն,

□ **ընդհանուր ռեակցիա՝** գլխացավեր, մկանային ցավեր, անհանգստություն, հոգնածություն, անսովոր թուլություն:

■ **Կորոնավիրուսային հիվանդության դեմ կատարվող պատվաստումներից հետո 0-48 ժամվա ընթացքում՝**

□ **տեղային ռեակցիա՝** ներարկման տեղում ցավ, կարմրություն, այտուցվածություն, կոշտություն,

□ **ընդհանուր ռեակցիա՝** գլխացավեր, մկանային ցավեր, անհանգստություն, հոգնածություն, անսովոր թուլություն, ջերմության բարձրացում, հոդացավ, սրտխառնոց,

□ 4-20-րդ օրերի ընթացքում՝ արտահայտված գլխացավ, գլխում ճնշման պզացում, մարմնի վրա կապտուկների կամ արյունավեղումների առկայություն, գլխուղեղի երակային սինուսների թրոմբոզ:

ՑԱՆԿ

ԼՈՒՐՋ ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊԵՐԻ

Պատվաստանյութ	ՀԱԴ		Առաջացման ժամկետ
	Տեղային	Ընդհանուր	
ԲՑԺ	թարախային լիմֆադենիտ		2-6 ամիս
	ԲՑԺ օստեիտ		1-12 ամիս
		դիսեմինացված ԲՑԺ	1- 12 ամիս
Վիրուսային հեպատիտ Բ		անաֆիլաքսիա	0 – 1 ժամ
ԿԿԽ		ցնցումներ	6-12 օր
		թրոմբոցիտոպենիա	15-35 օր
		անաֆիլաքսիա	0-1 ժամ
		արթրիտ*	1-3 շաբաթ
ՕՊՊ		ՊԱՊ**	4-30 օր, 4- 75 օր
ԱԿԴՓ (համակցված)	ստերիլ ինֆիլտրատ (փայտացման անատոքսին)	ցնցումներ	0-2 օր 1-6 շաբաթ
		հիպոտոնիկ, հիպոռեսպոնսիվ էպիզոդ	0-24 ժամ
		անաֆիլաքսիա	0-1 ժամ
		էնցեֆալոպաթիա***	0- 2 օր
		Գիեն-Բարեի համախտանիշ****	1-6 շաբաթ
ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ ԻՊՊ	ստերիլ ինֆիլտրատ (փայտացման անատոքսին)	ցնցումներ	0- 2 օր
		հարատև անմխիթար լաց, գրգռվածություն, քնկոտություն	0-24 ժամ 1-6 շաբաթ
		հիպոտոնիկ, հիպոռեսպոնսիվ էպիզոդ	0-24 ժամ
		անաֆիլաքսիա	0-1 ժամ
ԱԿԴՓ/ԻՊՊ ոչ բջջային կապույտ հազի բաղադրիչով	ստերիլ ինֆիլտրատ (փայտացման անատոքսին)	ցնցումներ	0-2 օր 1-6 շաբաթ
		հիպոտոնիկ, հիպոռեսպոնսիվ էպիզոդ	0-24 ժամ
		անաֆիլաքսիա	0-1 ժամ

ԱՓԴԿ ոչ բջջային կապույտ հազի բաղադրիչով	ստերիլ ինֆիլտրատ (փայտացման անատոքսին)	ցնցումներ	0-2 օր 1-6 շաբաթ
		հիպոտոնիկ, հիպոռեսպոնսիվ էպիզոդ	0-24 ժամ
		անաֆիլաքսիա	0-1 ժամ
ԱԴՓ-Մ	ստերիլ ինֆիլտրատ (փայտացման անատոքսին)	ցնցումներ	0 - 2 օր 1-6 շաբաթ
